

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ՝ ԱԶԳԵՐԻ
ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ*

ՀՏԴ 327.5(479.243)

Լիլիթ Ղալաթյան

Իրավաբանական գիտությունների մագիստրոս, ԵՊՀ Քաղաքական ինստիտուտների և
գործընթացների ամբիոնի հայցորդ
Երևան, Հայաստանի Հանրապետություն
Dallakyanlilit90@gmail.com

Հոդվածում բազմաթիվ փաստերի վերլուծությամբ փորձ է արվել բացահայտել ինքնորոշման իրավունքի կիրառման առանձնահատկությունները միջազգային իրավունքում, ներկայացվել են թեմային վերաբերող իրավական փաստաթղթերը և դատական նախադեպերը, ինչպես նաև՝ առանձին օրինակներ՝ տարբեր տարածաշրջաններում ինքնորոշման իրավունքի իրականացման վերաբերյալ: Մանրակրկիտ վերլուծության են ենթարկվել ինքնորոշման իրավունքի վերաբերյալ միջազգային իրավագետների շրջանում գոյություն ունեցող տեսակետները և հակասությունները, ներկայացվել են այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ տարրերը և բաղադրիչները: Հոդվածը նպատակ ունի գոյություն ունեցող իրավական ակտերի և միջազգային փորձի շրջանակներում գտնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման բանալիները: Արվել է կարևոր եզրակացություն, որ անհրաժեշտ է արցախահայության ինքնորոշման իրավունքի հարցի լուծումը տեղափոխել միջազգային համապատասխան ատյաններ և կիրառել հասանելի ամբողջ իրավական գործիքակազմը՝ խնդրի արդարացի լուծման նպատակով: Զուգահեռներ են անցկացվել Կոստվոյի ինքնորոշման նախադեպի, դրանում «անջատում հանուն փրկության» սկզբունքի կիրառման և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի միջև: Հեղինակը եկել է եզրահանգման, որ արցախահայությանը սպառնացող գոյութենական վտանգի չեզոքացման համար հրամայական է դարձել «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքի կիրառումը, ինչի գործարկման համար անհրաժեշտ է միջազգային մեխանիզմների ներդրում՝ համապատասխան իրավասու մարմինների՝ այդ թվում ՄԱԿ Անվտանգության խորհրդի և ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի կողմից:

Բանալի բառեր՝ ինքնորոշման իրավունք, ՄԱԿ Անվտանգության խորհուրդ, Լեռնային Ղարաբաղ, ագրեսիա, Կոստվո, գաղութացված ժողովուրդներ, ՄԱԿ արդարադատության միջազգային դատարան, մարդիկյան սկզբունքներ:

Ներածություն

Վերջին տարիներին ազգերի ինքնորոշման իրավունքի հասկացությունը, դրա կիրառման շրջանակները և անհրաժեշտ պայմանները լայն քննարկման առարկա են

* Հոդվածը ներկայացվել է 02.03.2022:

Տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը 11.03.2022:

Հոդվածը տպագրության է ընդունվել 11.03.2022:

դարձել միջազգային իրավունքի մասնագետների շրջանում: Կոստվոյի անկախության ճանաչումը մեծ թվով պետությունների կողմից նոր թափ հաղորդեց այլ ժողովուրդների կողմից իրենց ինքնորոշման իրավունքի իրականացման համար պայքարին: Արցախահայությունը տարիներ շարունակ փորձել է, կիրառելով միջազգային իրավունքի տարբեր մեխանիզմներ, հասնել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդարացի լուծման: Արցախյան երկրորդ պատերազմից և Ադրբեջանի սանձազերծած ագրեսիայից հետո արցախահայության գոյությանը սպառնացող վտանգների չեզոքացումը էլ ավելի հրատապ խնդիր է դարձել հայկական կողմերի համար: Հրապարակման նպատակն այս գործընթացների հեռանկարների ուսումնասիրությունն է՝ դրանից բխող հետևանքներով:

Նյութեր եւ մեթոդներ

Ուսումնասիրության ժամանակ հաջողությամբ կիրառվել են այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են դիալեկտիկա, համակարգային մեթոդ, վերլուծություն, համամասնության անալոգիաների օգտագործում, մոդելավորում: Եզրահանգումների իրականացման համար հողվածի հեղինակի կողմից օգտագործվել են իրավաբանական մեթոդաբանություն, ինչպես նաև՝ սոցիոլոգիական հետազոտության մեթոդներ՝ ոլորտի փորձագետների գնահատականների տեսքով:

Քննարկում, Հիմնական տեքստ

1. Ինքնորոշման իրավունքի հիմնախնդիրները

Միջազգային հարաբերություններում ինքնորոշման իրավունքի սկզբունքի իրացման խնդիրը միշտ եղել է արդիական և միևնույն ժամանակ վիճահարույց՝ դրա սուբյեկտների շրջանակի, իրացման ծավալի և նպատակահարմարության հետ կապված: Եթե 1945 թվականին ՄԱԿ անդամ երկրների թիվը 55 էր, ապա հիմա ՄԱԿ անդամ է հանդիսանում 193 երկիր, ինչը պայմանավորված է ինքնորոշման իրավունքի լայն իրացմամբ:

Կոստվոյի ինքնորոշման նախադեպը դարձավ այն խթանը, որից հետո ինքնորոշման իրավունքի հիմնահարցերը նորից սկսեցին ակտիվորեն քննարկվել միջազգային հարաբերություններում: Կոստվոյի անկախացումից հետո արևմտյան երկրները հայտարարեցին, որ այն չի կարող հանդիսանալ նախադեպ այլ հակամարտությունների լուծման համար: Արևմտյան երկրների այդ հայտարարությունները կարող են պատճառ հանդիսանալ, որպեսզի Կոստվոյի դեպքը համարվի ոչ իրավաչափ միջազգային իրավունքի տեսանկյունից և կարող է ընկալվել, որպես *ad hoc* իրավիճակային լուծում: Սակայն Կոստվոյի նախադեպն արդեն սկսել է որպես փաստարկ բերվել այլ հակամարտությունների լուծման համար: «Անջատում հանուն փրկության» եզրույթն առաջացել է հենց Կոստվոյի հետ կապված և սկսել է օգտագործվել նաև այլ հակամարտությունների դեպքում: Ըստ էության, ՄԱԿ Անվտանգության խորհրդի 1244 բանաձևը կարելի է համարել առաջին որոշումը, ըստ որի՝ պետության սուվերեն տարածքում ապրող մարդկանց խումբը կարող է որոշակի բացառիկ պայմաններում ստանալ ինքնորոշման իրավունք:

2007 թվականին մյուսխենյան իր ելույթում ՌԴ նախագահ Պուտինը հայտարարեց, որ Կոստվոյի ճանաչումը սխալ էր¹ (V.Putin)} և կարող է նախադեպ հանդիսանալ այլ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2022

տարածաշրջաններում էթնիկ հակամարտությունների լուծման համար, ինչը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Դրան հաջորդեցին Աբխազիայի և Հյուսիսային Օսեթիայի ճանաչումը Ռուսաստանի կողմից:

Կոսովոյի անկախացմանը դեմ արտահայտվողները հնչեցնում են տարատեսակ հարցեր, մասնավորապես՝

արդյո՞ք առանց ՄԱԿ թույլտվության ՆԱՏՕ-ն իրավունք ուներ իրականացնել գործողություններ Կոսովոյում,

արդյո՞ք մարդու իրավունքների զանգվածային խախտումների դեպքում միջազգային հանրությունն իրավունք ունի ներխուժել սուվերեն պետության տարածք,

արդյո՞ք իրավաչափ էր միջազգային կառավարման ներդրումը Կոսովոյում,

արդյո՞ք մարդու իրավունքների զանգվածային խախտումների դեպքում իրավունք կա կիրառել անջատում՝ հանուն փրկության սկզբունքը:

Միջազգային իրավունքի մասնագետների շրջանում ձևավորվել է տեսակետ, որ բացառիկ դեպքերում հնարավոր է կիրառել Կոսովոյի նախադեպը այլ հակամարտությունների լուծման համար: Դրա համար անհրաժեշտ է 7 պայման.

1. Պատերազմը պետք է ունենա արդար պատճառ:

Վերականգնվող իրավունքը կամ անարդարությունը պետք է առավել լինի պատերազմի վտանգից: Միջազգային հանրությունը կարող է պետության տարածքային ամբողջականության սկզբունքին հակադրել մարդու իրավունքների ոտնահարման, կոտորածների կամ ցեղասպանության վտանգը, իսկ անջատողականները կարող են դիմել միջազգային հանրությանը՝ ոչնչացման վտանգից խուսափելու կամ մարդու իրավունքների պաշտպանության նպատակով:

2. Արտաքին ներխուժումը պետք է իրականացվի արդար նպատակներով:

Այս սկզբունքը սերտորեն կապված է առաջին պայմանի հետ: Արտաքին միջամտությունը պետք է իրականացվի, օրինակ՝ մարդու իրավունքների պաշտպանության նպատակով, այլ ոչ թե աշխարհաքաղաքական շահերից ելնելով:

3. Միայն իրավասու սուբյեկտները իրավունք ունեն ուժ կիրառել:

Պետության դեպքում դա հանրային վստահությունը վայելող և պետական ինստիտուտները ներկայացնող կողմն է, իսկ անջատողականների դեպքում տվյալ էթնիկ խմբին կամ ժողովրդին ներկայացնելու իրավունք ունենալն է: Միջազգային ներխուժման դեպքում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի կողմից անջատողական հակամարտություններում միջամտության իրավունքի պայմանները սահմանված են ՄԱԿ կանոնադրությամբ:

4. Գոյություն ունի առարկայական հնարավորություն ուժի կիրառման միջոցով վերականգնել խախտված իրավունքները:1

Արտաքին միջամտություն իրականացնող կողմը պետք է վստահ լինի, որ կհասնի հաջողության և ուժային լուծում նախաձեռնելով՝ կհասնի խախտված իրավունքների վերականգնմանը: Այս սկզբունքի հետ սերտորեն կապված է նաև համաչափության սկզբունքը, ըստ որի՝ սպասվող օգուտները պետք է գերակշռեն պատերազմի հետևանքով առաջացած վնասներին:

5. Ռեժիմի կիրառումը պետք է լինի վերջին միջոցը՝ համապատասխան սուբյեկտների խախտված իրավունքների վերականգնման համար և մինչ պատերազմ սկսելը պետք է պարզ լինի, որ այլ միջոց այլևս գոյություն չունի:

6. Ստեղծվող պետությունը պետք է ունենա ինստիտուտներ և կայանա, պետք է լինեն արդարացիորեն օբյեկտիվ հնարավորություններ, որ տվյալ պետությունը կճանաչվի միջազգային հանրության կողմից:

7. Անջատողական շարժման ճանաչման համար կարևոր է *uti possidetis* սկզբունքը: Այն ենթադրում է, որ նոր պետությունները, որոնք ստացել են անկախություն, պետք է ունենան նույն սահմանները, ինչպիսիք ունեին գաղութ եղած ժամանակ կամ երբ կախյալ տարածք էին և կամ հանդիսանում էին վարչատարածքային միավոր այլ պետությունների կազմում:

2. Նոր պետությունների առաջացման եղանակները:

Ելնելով միջազգային փաստաթղթերում ամրապահված ձևակերպումից՝ բոլոր մարդիկ ունեն ինքնորոշման իրավունք: Այդ ձևակերպման անորոշությունը տարրերը բացում է առիթ է հանդիսանում, մասնավորապես, թե որ մարդկանց կամ որ խմբի մարդկանց է դա վերաբերում: Հասկանալի է, որ մեծ տերությունները, որոնք իրենց կազմում ունեն ֆեդերատիվ միավորներ, չեն կարող գոհ լինել այսպիսի հնարավորությունից, քանի որ այդ դեպքում կկանգնեն մասնատման վտանգի առաջ: Անկախ պետությունների առաջացման գործընթացները տարբերվում են իրենց իրավական հիմքերով և քաղաքական գործընթացներով: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Աֆրիկայում անցյալ դարի՝ 50-70-ական թվականներին նոր պետությունների առաջացման գործընթացը հիմնականում խաղաղ էր և առանց լուրջ բախումների: Պատճառներից հիմնականն Աֆրիկյան երկրների միության կողմից 1964 թվականին Կահիրեում ընդունված հռչակագիրն էր^[2] (2. RESOLUTIONS ADOPTED BY THE FIRST ORDINARY SESSION OF THE ASSEMBLY OF HEADS OF STATE AND GOVERNMENT HELD IN CAIRO), ըստ որի՝ պետությունները պետք է անկախություն ստանան նախկին գաղութների սահմաններում, և որևէ էթնիկ միավոր, որը բաժանվել է նոր սահմաններով, իրավունք չունի վիճարկել այդ նոր պետության սահմանները: Այս մոտեցումը կիրառեց Արդարադատության միջազգային դատարանը 1983 թվականի իր՝ Բուրկինաֆասոն ընդդեմ Մալիի վեճի ժամանակ^[3] (INTERNATIONAL COURT OF JUSTICE, *Frontier Dispute (Burkina Faso/Republic of Mali)*)՝ այդպիսով օրինական տեսանկյունից վերջ դնելով աֆրիկյան տարբեր էթնիկ խմբերի կողմից արյունահեղ բախումների հրահրմանը: Ակնհայտ է, որ Աֆրիկայում էթնիկ խմբերի անկախացումը կարող էր կործանարար լինել այդ մայրցամաքի համար, քանի որ, օրինակ՝ միայն Նիգերիայում գոյություն ունեն 250 էթնիկ խմբեր և եթե նրանք ցանկություն հայտնեն ինքնորոշվել՝ ելնելով միայն էթնիկ պատկանելիության սկզբունքից, ապա Աֆրիկայում քաոս կսկսվի:

Այս գործընթացում եղավ միայն մի բացառություն՝ Երիթրեան: 1950 թվականին ընդունված ՄԱԿ 390 Ա բանաձևի^[4] (Text of resolution 390 A (V) adopted on 2 December 1950 by the General Assembly of the United Nations, Annexes (p. 74-89)) համաձայն՝ նախկին իտալական գաղութ Երիթրեան ինքնավար միավորի կարգավիճակով պետք է դառնար Եթովպիայի կազմում գտնվող անկախ վարչատարածքային միավոր: Սակայն մի քանի տարի անց Եթովպիան խախտեց ՄԱԿ կողմից սահմանված բանաձևը և 1962 թվականին վերացրեց Երիթրեայի օրենսդիր մարմինը, որից հետո քաղաքացիական պատերազմ սկսեց, ինչը հանգեցրեց 1993 թվականին ՄԱԿ կողմից նոր՝ Երիթրեա պետության ճանաչման:

Այլ տեսանկյունից պետք է դիտարկել Բանգլադեշի՝ նախկին Արևելյան Պակիստանի անկախացումը: Ի պատասխան անջատողական պահանջների՝ Պակիստանի ղեկավարությունը սկսեց իրականացնել զանգվածային ծերբակալություններ, սպանություններ, բռնաճնշումներ: Անջատողականներն իրենց հերթին վայելում էին Հնդկաստանի հովանավորությունը: Հակամարտության ամբողջ ընթացքում ՄԱԿ-ը չէր միջամտում՝ միայն կոչ անելով Հնդկաստանին և Պակիստանին դուրս բերել իրենց զորքերն այդ տարածքից: Պակիստանյան զորքերի պարտությունից հետո դե ֆակտո ստեղծվեց նոր պետություն, ինչը հանգեցրեց դրա ճանաչմանը, երբ Չինաստանը հանեց իր վետոն(5) (Alden) այդ որոշման նկատմամբ: Բանգլադեշ անվամբ այս նոր պետության առաջացումը չբերեց որևէ իրավական քննարկումների, ուղղակի ճանաչվեց արդեն իսկ գոյություն ունեցող փաստը և գործեց էֆեկտիվության սկզբունքը:

1988-1991 թվականների Սովետական Միության փլուզման հետևանքով առաջացած պետությունները հաջողությամբ օգտվեցին ինքնորոշման իրավունքից, քանի որ Ռուսաստանն արդեն գիտակցում էր, որ անհնար է պահպանել միությունը, և կորսված էր այն գաղափարական հենքը, որի վրա կառուցվել էր ԽՍՀՄ-ն: Ըստ էության՝ ԱՊՀ հիմանդրումով կողմերը հաստատեցին, որ ԽՍՀՄ-ն որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, այլևս գոյություն չունի և այն փաստորեն ինքնալուծարվեց:

Բալթյան 3 երկրների անկախության ծեռքերումը պետք է դիտարկել այլ տեսանկյունից: Նույնիսկ Սովետական Միությունը դեռ 1940 թվականին ստիպված էր ընդունել, որ օկուպացիայի է ենթարկել այդ երկրները: Սակայն նրանք որոշ չափով պահպանեցին իրենց պետությունը և որպես գաղութացված երկրներ հետագայում անկախություն ծեռք բերեցին:

Այլ է նախկին Հարավսլավիայի դեպքը: Հարավսլավիայի ֆեդերատիվ սոցիալիստական հանրապետության սահմանադրության մեջ նշվում էր, որ այն սերբերի, խորվաթների և սլովենների թագավորությունն է, և ըստ այդ սահմանադրության՝ Հարավսլավիայի մաս կազմող պետություններն իրավունք ունեն անջատվել ֆեդերատիվ հանրապետությունից: Ռևստի Սերբիայի կողմից խորվաթիայի և սլովենիայի անկախացմանը խանգարելը կնշանակեր ոտնահարել սահմանադրությունը:

Արևելյան Թիմորի դեպքը պետք է դիտարկել ժողովուրդների ապագադրթացման տեսանկյունից: Ինդոնեզիայի զորքերն օկուպացրել էին Թիմորի տարածքը՝ դրա բնակչության կամքին հակառակ: Ռևստի այստեղ գործեց գաղութացված տարածքների բնակչության ինքնորոշման իրավունքի սկզբունքը, ըստ որի՝ գաղութացված ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այս պարագայում Ինդոնեզիային ոչինչ չէր մնում, քան դուրս հանել իր զորքերը և թույլ տալ, որպեսզի տեղի բնակչությունը հանրաքվե անցկացնի: Արդյունքում ստեղծվեց Արևելյան Թիմորի անկախ պետությունը:

3. Ինքնորոշման իրավունքի սուբյեկտները և իրականացման շրջանակները:

ՄԱԿ հիսունամյակին նվիրված Վիսափոր ասամբլեայի 1995 թվականին ընդունված հռչակագրում(6) (Declaration on the Occasion of the 50th Anniversary of the United Nations) նշված է, որ մարդու և քաղաքացու իրավունքների կոպիտ ոտնահարումների դեպքում, երբ իշխանությունների կողմից իրականացվում է խտրական քաղաքականություն՝ ռասսայական, կրոնական կամ այլ պատկանելիությունից ելնելով, մարդիկ իրավունք են ծեռք բերում իրացնել ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև նոր պետության ստեղծում: Այս պրոցեսը միջազգային իրավունքի հայտնի մասնագետ Լի Բու-

շերն անվանում է *remedial seccession*՝ անջատում՝ հանուն փրկության, ինչը մեծ տարածում է գտել իրավագետների շրջանում: Կոսովոյի դեպքը դիտարկվում է միջազգային պրակտիկայում՝ որպես հենց այդ իրավունքի իրացումը^{7} (*Coppieters*): Պետք է նշել, որ միջազգային հանրության կողմից չկա միանշանակ տեսակետ, թե ինչ միջոցներ պետք է կիրառվեն մարդու իրավունքների խախտման դեպքում, քանի որ չկա հստակ պատասխանատվության մեխանիզմ պետությունների համար, և մարդու իրավունքների ոտնահարման վերաբերյալ միջազգային հանրության հայտարարությունները պարտադիր բնույթ չունեն տվյալ պետության համար: Այս պարագայում մեծ է հավանականությունը, որ պետությունը կսկսի բռնաճնշումներ կիրառել անջատողականների նկատմամբ, և այս դեպքում միջազգային հանրությունը չպետք է բավարարվի միայն հայտարարություններով, այլ պետք է մշակի գործունե մեխանիզմներ: Օրինակ՝ Կոսովոյի դեպքում ՄԱԿ Անվտանգության խորհուրդը՝ միջազգային խաղաղության և անվտանգության սպառնալիքի սկզբունքի ներքո իրականացրեց իր գործունեությունը և միջազգային կառավարում մտցրեց Կոսովոյում^{8} (*UN MISSION IN KOSOVO*):

Սովորաբար ընդունված է համարել, որ մեծ տերությունների կողմից արձագանքն անջատողականների ինքնորոշման իրավունքի իրականացմանն ավելի շատ դիտվում է որպես քաղաքական գործիք՝ իրենց աշխարհաքաղաքական նպատակների իրականացման համար: Ուստի այսպիսի հակամարտություններում երրորդ կողմի ներքաշումը չի ողջունվում և արգելվում է: Ըստ ՄԱԿ օրենսդրության ինքնորոշման իրավունքի իրականացման ժամանակ արգելվում է երրորդ կողմի ներքաշումը կամ օգնության տրամադրումն անջատողականներին: Եվ նույնիսկ վերջիններիս հանդեպ բռնաճնշումների դեպքում երրորդ կողմից օգնությունը պետք է լինի ոչ ռազմական: 1986 թվականին Նիկարագուան ընդդեմ ԱՄՆ գործով^{9} (*CASE CONCERNING MILITARY AND PARAMILITARY ACTIVITIES IN AND AGAINST NICARAGUA*) դատավարության ժամանակ Միջազգային Արդարադատության դատարանը որոշեց, որ անջատողականներն իրավունք չունեն դիմել այլ երկրի օգնությանը: Մինչդեռ պետություններն իրավունք ունեն դիմել այլ պետություններին՝ իրենց տարածքային ամբողջականության խախտման ժամանակ: Կոսովոյի փորձը ցույց է տալիս, որ ՄԱԿ Աև-ը պիտի լինի այն մարմինը, որին իրավունք կվերապահվի իրականացնել հումանիտար հիմունքներով ներխուժում՝ գոյաբանական խնդրի աաջացման և մարդու իրավունքների կոպիտ ոտնահարումների դեպքում:

Ժամանակակից միջազգային իրավունքի համակարգում պետությունը չի հանդիսանում միջազգային իրավունքի հիմքը: Օրինակ՝ համընդհանուր իրավասության սկզբունքի վերաբերյալ ՄԱԿ Աև-ի 2006 թվականին ընդունված 1674 բանաձևում^{10} (*United Nations Security Council Resolution 1674*) ցեղասպանության, պատերազմական հանցագործությունների կամ մարդկության դեմ հանցագործությունների դեպքում Աև-ն իրավունք ունի ուժ կիրառել, քանի որ դրանք մարդկության և միջազգային խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ են: Միջազգային իրավունքը, որպես այդպիսին, ստեղծվել է միջազգային անվտանգության և խաղաղության և մարդու՝ անհատի իրավունքների պաշտպանության նպատակով: Իզուր չէ, որ ՄԱԿ կանոնադրության մեջ մարդու իրավունքների պաշտպանությունը, հիմնարար ազատությունները նշված են որպես նպատակ: Եվ այն դեպքերում, երբ պետությունը խախտում է մարդու իրավունքները, միջազգային իրավունքը կարող է չպաշտպանել տվյալ պետության

նը{11} (*Internationalization of Ethnic Conflicts and Impact on Regional and International Security*) և մարդիկ՝ որպես իրենց իրավունքների պաշտպանության վերջին միջոց, իրավունք ունեն կիրառել «անջատում» հանուն փրկության» սկզբունքը:

Շատ է խոսվում տարածքային ամբողջականության և ինքնորոշման իրավունքների միջև հակասությունների մասին, իբրև թե մեկը բացառում է մյուսին{12 (A.C.Быханова)}: ՄԱԿ կանոնադրության մեջ ինքնորոշման իրավունքը նշվում է որպես նպատակ, մինչդեռ տարածքային ամբողջականության սկզբունքը բխում է երկու այլ նպատակներից՝ ուժի չկիրառման և պետությունների սուվերեն հավասարության նպատակներից: Տարածքային ամբողջականության սկզբունքը դիտարկվում է միջպետական հարաբերություններում և պետության ներքին հարաբերություններին դա չի վերաբերում: Քանի որ միջէթնիկ հարաբերությունները հանդիսանում են պետության ներքին խնդիրը, ուստի այս երկու հասկացությունների միջև հակասությունը բացակայում է{13} (Քոչարյան):

Մինչ օրս գիտանականների միջև գոյություն ունի բանավեճ, թե ովքեր են ինքնորոշման իրավունքի սուբյեկտները: Եթե ընդհանրացնենք տարբեր տեսակետներ, ապա դրանք են՝ գաղութային կախման մեջ գտնվող ազգերը, բնիկ ժողովուրդները՝ ազգային փոքրամասնությունները, ցանկացած խումբ կամ ժողովուրդ, որոնք ապրում են տվյալ տարածքում և պատկանում են միևնույն էթնիկ, կրոնական խմբին կամ լեզվաընտանիքին, օկուպացված ժողովուրդները, երկրի քաղաքացիները և այլն:

Իրավագետները միակարծիք են, որ գաղութացված ժողովուրդները լիովին օգտվում են ինքնորոշման իրավունքից: Գաղութը տարածք է, որը գտնվում է այլ պետության վերահսկողության ներքո, որի ժողովուրդը չունի տնտեսական և քաղաքական իշխանություն և տարբեր է գաղութացնող պետության ժողովրդից: 1960 թվականի ՄԱԿ կողմից ընդունված հռչակագրում նշվում է, որ գաղութացված ժողովուրդները և երկրներն ունեն ինքնորոշման իրավունք՝ անկախ էթնիկ կամ կրոնական հատկություններից կամ թվաքանակից և միայն մի դեպքում կարող է այդ իրավունքը չկիրառվել, եթե գաղութացված ժողովուրդները չունեն գաղութատիրությունից ազատվելու ցանկություն:

Մյուս կարևոր սուբյեկտ են հանդիսանում ազգային փոքրամասնությունները: 2007 թվականին ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բնիկ ժողովուրդների մասին հռչակագրում նշվում է, որ նրանց տրվում է ինքնավարության իրավունք՝ քաղաքական, սոցիալական, մշակութային և տնտեսական ինքնակառավարում իրականացնելու համար:

Ինքնորոշման իրավունքի սուբյեկտ են հանդիսանում աշխարհի ժողովուրդները, որոնք պատկանում են նույն էթնիկ լեզվաընտանիքին, կրոնական հավատամքին: Վերջիններս օգտվում են ինքնորոշման իրավունքից՝ բնիկ ժողովուրդներին բնորոշ ձևով՝ միջազգային իրավունքի սկզբունքների և միջազգային փորձի համատեքստում:

4. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորումը՝ ինքնորոշման իրավունքի տեսանկյունից:

Ամփոփելով վերը շարադրված փորձը միջազգային իրավունքում՝ անդրադառնանք Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին՝ միջազգային իրավունքի տեսանկյունից:

Ադրբեջանն այսօր հայտարարում է, որ Լեռնային Ղարաբաղը միջազգայնորեն հանդիսանում է Ադրբեջանի Հանրապետության մաս և չունի ինքնորոշման իրավունք:

Սակայն փաստերի օբյեկտիվ քննությունը ցույց է տալիս այդ հայտարարությունների կեղծ և չհիմնավորված լինելը: Դիտարկենք մի քանի փաստ:

1. 1918-1920 թվականներին Լեռնային Ղարաբաղը ինքնակառավարվող սուբյեկտ էր, մինչդեռ Ադրբեջանը՝ որպես պետություն, աշխարհի քարտեզին հայտնվել է 1918 թվականին:

2. Քանի որ Ադրբեջանն ուներ տարածքային հավակնություններ իր բոլոր հարևանների հանդեպ, նրա՝ 1920 թվականի Ազգերի լիգային անդամակցելու դիմումը մերժվեց՝ սահմանների անհստակության պատճառով:

3. 1921 թվականի Կովկասյան բյուրոյի որոշմամբ Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին՝ իր ժողովրդի կամքին հակառակ: Ի դեպ, Կովկասյան բյուրոն այդպիսի որոշում ընդունելու իրավասություն չուներ:

4. Այսօր Ադրբեջանը նշում է, թե ինքը հանդիսանում է Ադրբեջանի առաջին հանրապետության իրավահաջորդը և ԽՍՀՄ իշխանության տարիները համարում է օկուպացիա: Բացի այդ, 1991 թվականի հոկտեմբերի 18-ի սահմանադրական ակտով Ադրբեջանը հրաժարվել է ԽՍՀՄ իրավահաջորդությունից՝ իրեն հռչակելով 1918-1920 թթ Ադրբեջանի առաջին հանրապետության իրավահաջորդ: Ստացվում է, որ Ադրբեջանն ինքը չի ձանաչում Կապլուրոյի որոշումը, իսկ մինչ այդ Լեռնային Ղարաբաղը երբեք չի հանդիսացել Ադրբեջանի Հանրապետության մաս:

5. Նույն իրավիճակն է ստեղծվում այժմ Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետությանը ներկայացվող տարածքային պահանջների դեպքում: Ադրբեջանը ցանկանում է սահմանազատման և սահմանագծման գործընթացն իրականացնել 1975 թվականի ԽՍՀՄ քարտեզներով, քանի որ այդ ժամանակ Հայաստանի տարածքից անլկավներ են տրվել Ադրբեջանին: Սակայն միևնույն ժամանակ նշում է, որ ինքը չի հանդիսանում ԱխՍՀ իրավահաջորդ: Բացի այդ, ՀԽՍՀ և ԱխՍՀ միջև սահմանները չեն ձանաչվել միջազգային իրավունքի կողմից, քանի որ դրանք հանդիսանում էին ԽՍՀՄ ներքին վարչատարածքային, այլ ոչ թե երկու անկախ երկրների միջև սահմաններ:

6. 1990 թվականի ապրիլի 3-ին Լեռնային Ղարաբաղի կողմից իրացվեց «ԽՍՀՄ կազմից դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը, համաձայն որի՝ հանրապետության կողմից ԽՍՀՄ կազմից դուրս գալու դեպքում ինքնավար կազմավորումները և ազգային փոքրամասնություններն իրավունք ստացան դուրս գալու հանրապետության կազմից և ինքնուրույն որոշելու իրենց հետագա կարգավիճակը: Դրանից հետո Ադրբեջանի ողջ տարածքում սկսեցին հայերի ջարդեր իրականացվել:

7. Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է դե ֆակտո գործող պետություն: Ադրբեջանը, ըստ էության, ձանաչել է Լեռնային Ղարաբաղը՝ որպես բանակցությունների կողմ՝ 1994 թվականին ստորագրելով բիշքեյյան արձանագրությունները (14 (Բիշքեյյան արձանագրություններ)): Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է դե ֆակտո գործող պետություն՝ կայացած ինստիտուտներով և կառավարման ժողովրդավարական համակարգով: Բացի այդ, միջազգային դիտորդները, որոնք մասնակցել են Լեռնային Ղարաբաղի տարբեր մակարդակների ընտրություններին, դրանք ձանաչել են ժողովրդավարական: Իսկ Ադրբեջանը մի շարք հեղինակավոր կազմակերպությունների կողմից ձանաչվել է որպես ավտորիտար ռեժիմ ունեցող երկիր, որտեղ խախտվում են մարդու իրավունքները:

8. Պատմության ընթացքում Ադրբեջանը, սկսած 1918 թվականից, Լեռնային Ղա-

դաբաղի հայության նկատմամբ մշտապես իրականացրել է խտրական քաղաքականություն, մարդու և կյանքի իրավունքների բազմաթիվ խախտումներ, բնակչության զանգվածային տեղահանումներ: ԽՍՀՄ իշխանության տարիներին խտրականություն էր իրականացվում սոցիալ-տնտեսական, մշակութային ոլորտներում, փոխվել էր էթնիկ հարաբերակցությունը: Ամեն ինչ արվում էր «Ղարաբաղն առանց հայերի» կարգախոսի իրականացման համար:

9. Ադրբեջանի գործողությունները Լեռնային Ղարաբաղի հանդեպ ղարաբաղյան առաջին և երկրորդ պատերազմների ժամանակ միջազգային իրավունքի տեսանկյունից հանդիսանում են ագրեսիայի դրսևորում: Ըստ միջազգային իրավունքի սահմանման՝ ագրեսիան^[15] (Definition of Aggression, United Nations General Assembly Resolution 3314) մի պետության կողմից զինված ուժի կիրառումն է այլ պետության սուվերենության հանդեպ, ընդ որում՝ ագրեսիայի ենթարկված պետությունը կարող է միջազգայնորեն ճանաչված չլինել:

10. Ըստ ՄԱԿ 1974 թվականին ընդունված 3314 բանաձևի՝ հաստատվում է պետությունների կողմից պարտավորությունը չկիրառել ուժ՝ ժողովուրդներին ինքնորոշման իրավունքից զրկելու նապատակով: Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանը բազմիցս խախտել է այդ պարտավորությունը:

11. Այն փաստը, որ կա ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափ, որը հանդիսանում է միջազգային մանդատ ունեցող կառույց և զբաղվում է Լեռնային Ղարաբաղի խնդրով, ցույց է տալիս, որ միջազգային հանրությունն այդ հակամարտությունը չի համարում լուծված: Ավելին, հակամարտության վերաբերյալ բանակցությունների հիմքում ընկած են երեք սկզբունքներ՝ ինքնորոշման իրավունք, տարածքային ամբողջականություն, ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման արգելք: Ադրբեջանը բազմիցս, հատկապես ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո հայտարարել է, թե Ղարաբաղի հարցը լուծված է, ինչին ի պատասխան ԱՄՆ և Ֆրանսիան նշում են, որ խնդիրը լուծված չէ, իսկ վերջերս նրանց է միացել նաև Ռուսաստանը, որը ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո հայտարարում էր, որ հակամարտությունը լուծված է: Այն փաստը, որ Ադրբեջանը մասնակցում է Մինսկի խմբի գործունեությանը և առնվազն չի հայտարարել դրանից դուրս գալու մասին, ապացուցում է, որ Ալիևի հայտարարություններն ընդամենը ներքին լսարանի սպառման համար են:

12. Միջնորդները նշում են, որ երեք սկզբունքները պետք է դիտարկել միասին՝ որպես մեկ ամբողջություն: Սա նախ ապացուցում է, որ Ադրբեջանի փորձերը շեշտը դնել միայն տարածքային ամբողջականության սկզբունքի վրա ընդունելի չի, և, ամենակարևորը, մեկը մյուսին չի հակասում կամ ածանցվում: Կարևոր է դիտարկել նաև Մադրիդյան փաստաթղթում առկա վեց տարրերը՝

ա. ԼՂՀ շրջապատող տարածքների վերադարձ Ադրբեջանին,

բ. ԼՂ ժամանակավոր կարգավիճակ՝ ինքնակառավարման երաշխիքներով և անվտանգությամբ,

գ. ԼՂ և ՀՀ կապող միջանցք,

դ. ԼՂ վերջնական կարգավիճակի որոշում՝ պարտադիր բնույթ կրող կամարտահայտման միջոցով,

ե. Տեղահանված և փախստական անձանց՝ իրենց բնակության վայրը վերադառնալու իրավունք,

գ. Անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն նաև խաղաղապահ գործունեություն:

Այս ամենից բխում է, որ միջազգային հանրությունը չի նշում, որ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը պետք է որոշվի Ադրբեջանի կազմում, ինչպես նշում է Ադրբեջանը: Հետևաբար, միջազգային հանրությունն ընդունում է ԼՂ բնիկ ժողովրդի՝ արցախահայության ինքնորոշման իրավունքի իրականացման՝ ընդհուպ մինչև անկախ պետություն ստեղծելու հնարավորությունը: Ֆրանսիայի խորհրդարանի հայտարարությունը, որ ԼՂ-ի դեմ հետագա ագրեսիայի դեպքում Ֆրանսիան կձանաչի ԼՂ անկախությունը, նույնպես դրա ապացույցն է:

13. Ակնհայտ է Ադրբեջանի կողմից հայերի հանդեպ քսենոֆոբ քաղաքականությունը, սև ցուցակների կազմումը՝ ԼՂ այցելած անձանց վերաբերյալ, ծագումով հայերի մուտքի արգելումն Ադրբեջան, խաղաղ պայմաններում հայ սպային գլխատած Սաֆարովին հերոսի կոչում շնորհելը, վերջիվերջո, դարաբաղյան երկրորդ պատերազմի հրահրումը և խաղաղ բնակչության հանդեպ հանցագործություններն ապացուցում են, որ ԼՂ-ի բնակչությունը կանգնած է էքզիստենցիալ վտանգի առջև: Բազմաթիվ միջազգային կառույցներ հայտարարել են դարաբաղյան երկրորդ պատերազմում խաղաղ բնակչության դեմ արգելված ֆոսֆորային զենքերի կիրառման, ահաբեկիչների ներգրավման մասին, որի վերաբերյալ հայտարարություններ են արել նույնիսկ Ֆրանսիայի նախագահ Մակրոնը և ՌԴ արտաքին հետախուզության ծառայության ղեկավար Նարիշկինը, իսկ Ադրբեջանը մինչ օրս էլ հայտարարում է հարցը ուժով լուծելու մասին՝ խախտելով և՛ մադրիդյան սկզբունքները, և՛ միջազգային իրավունքը:

4. Ադրբեջանն անընդհատ հրաժարվում է իր կողմից ձեռք բերված պայմանավորվածություններից, խախտում է ՄԱԿ բանաձևերը, որոնք այդքան ջանասիրաբար միշտ մեջբերում է: ՄԱԿ Աև-ի բանաձևերում նշվում է, որ կողմերը պետք է ձեռնպահ մնան որևէ գործողությունից, որը կխոչընդոտի խաղաղ կարգավորմանը, իսկ Ադրբեջանը, ի հակառակ դրան, նշում է, որ ռազմական լուծումը չի բացառվում: Բացի այդ, Աև բանաձևերում ՀՀ-ն չի հանդիսանում հակամարտության կողմ, այլ միայն կոչ է արվում ՀՀ-ին իր ազդեցությունը կիրառել ԼՂ-ի վրա՝ խաղաղ լուծման նպատակով: Այդ բանաձևերում նաև պահանջվում է վերականգնել շրջանի տնտեսական, տրանսպորտային և էներգետիկ կապերը, ապահովել միջազգային հումանիտար կառույցների կողմից մարդասիրական օգնության տրամադրումը, սակայն Ադրբեջանը շարունակում է ՀՀ շրջափակումը և տարածքային պահանջներ է ներկայացնում Հայաստանի Հանրապետությանը:

Այսքանից բխում է, որ տարածքային վեճերի լուծման նպատակով ՀՀ-ը պետք է դիմի ՄԱԿ միջազգային դատարան, քանի որ միայն այդ կառույցն է օժտված նման վեճերի լուծման իրավունքով: Եթե Ադրբեջանը հրաժարվել է ԽՍՀՄ սահմաններից, ապա ՀՀ-ը միանշանակ պետք է ձանաչի իրեն Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդ, Ազգերի լիգայի անդամ, ներկայացնի ԱՄՆ նախագահի կողմից ՀՀ և Թուրքիայի դիմումի հիման վրա իրականացված սահմանազատման արդյունքները, ինչն ի տարբերություն կալվյուրոյի կամ ԽՍՀՄ կողմից իրականացված սահմանազատման, ունի միջազգային ուժ և մանդատ և ենթակա է պարտադիր կատարման՝ դիմող կողմերի համար: Նույնը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը:

Եզրակացություն

Վերոնշյալից ելնելով, մեր կարծիքով, հայկական կողմի դիրքորոշումը պետք է հիմնված լինի հետևյալ փաստարկների վրա՝

Ա. Լեռնային Ղարաբաղը հռչակել է իր անկախությունը ԽՍՀՄ օրենքների համապատասխան,

Բ. Մինչ Ադրբեջանի Հանրապետության ծավալորումը Լեռնային Ղարաբաղը եղել է ինքնավարություն և երբեք չի գտնվել Ադրբեջանի կազմում,

Գ. Լեռնային Ղարաբաղը բռնակցվել է Ադրբեջանին անօրինական, Կալբյուրոյի ուղղմամբ՝ իր կամքին հակառակ, ինչում առկա են գաղութացման բոլոր նշանները,

Դ. Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի հայերի հանդեպ մշտապես իրականացրել է քսենոֆոբ, խտրական քաղաքականություն, խախտել է մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները,

Ե. Ադրբեջանը հրահրել է ագրեսիա ԼՂ-ի հանդեպ առաջին և երկրորդ ղարաբաղյան պատերազմների ժամանակ՝ օգտագործելով արգելված զինատեսակներ խաղաղ բնակչության դեմ, անընդհատ սպառնալով հայերի գոյությանը, ինչն իրավունք է վերապահում տեղի ժողովրդին օգտվելու «անջատում հանուն փրկության» սկզբունքից,

Զ. Ադրբեջանը ԽՍՀՄ տարիներին իրականացրել է խտրական վերաբերմունք Լեռնային Ղարաբաղի հանդեպ՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական ոլորտներում՝ այդպիսով նսեմացնելով և խախտելով նաև ԼՂ-ի ինքնավարության կարգավիճակը: Բացի այդ, ի պատասխան 1991 թվականի սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի կողմից անկախության հռչակման որոշման, նոյեմբերի 26-ին Ադրբեջանն ընդունեց «Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի լուծարման մասին» օրենքը և վերացրեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակը՝ խախտելով միջազգային իրավունքի նորմերը:

Է. Ադրբեջանն ուժ է կիրառել ի պատասխան Ղարաբաղի բնակչության ինքնորոշման իրավունքի ցանկության,

Ը. Ադրբեջանը խախտել է ուժի չկիրառման և դրա սպառնալիքի սկզբունքը և չի կատարել ՄԱԿ Անվտանգության խորհրդի՝ շրջափակումը վերացնելու մասին որոշումը, ինչպես նաև անտեսել է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում ձեռք բերված բոլոր պարտավորությունները,

Թ. Հայ-ադրբեջանական սահմանների ճշգրտման նպատակով ՀՀ-ը պետք է դիմի ՄԱԿ միջազգային դատարան, որն այդպիսի վեճերը լուծելու լիազորությամբ օժտված միակ օրինական մարմինն է: ՀՀ-ը պետք է նշի, որ հանդիսանում է Առաջին հանրապետության իրավահաջորդը և Ադրբեջանի հետ սահմանազատումը պետք է իրականացվի Ադրբեջանի առաջին հանրապետության սահմաններով, քանի որ Ադրբեջանն անվավեր է ձանաչել ԽՍՀՄ իրավական ակտերը,

Ճ. Լեռնային Ղարաբաղի խնդիրը նույնպես պիտի լուծվի ՄԱԿ միջազգային դատարանում՝ Կոսովոն որպես նախադեպ մեջբերելով և ներկայացնելով բոլոր իրավական հիմքերը և գոյություն ունեցող նախադեպերը, իսկ ՄԱԿ միջազգային քրեական դատարանում պետք է քննվեն ԼՂ-ի ժողովրդի նկատմամբ իրականացված բոլոր պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունները և ագրեսիան,

Ի. Ինքնորոշման իրավունքը չի հակասում տարածքային ամբողջականության սկզբունքին, քանի որ վերջինս առկա է միայն պետությունների միջև հարաբերություն-

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2022

ներում, իսկ ինքնորոշման իրավունքը հանդիսանում է ՄԱԿ կանոնադրության մեջ նշված նպատակ և ունի հստակ սուբյեկտներ: Արդարադատության միջազգային դատարանը 2010 թվականի հուլիսի 22-ի խորհրդատվական որոշմամբ արձանագրել է, որ տարածքային ամբողջականության կիրառման ոլորտը սահմանափակվում է ձանաչված պետությունների հարաբերությունների ոլորտով և, որպես եզրակացություն, դատարանը ընդունել է, որ միջազգային իրավունքը չի արգելում անկախության միակողմանի ձանաչումը:

Ակնհայտ է, որ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքը շատ հաճախ դառնում է գործիք մեծ տերությունների ձեռքում՝ իրենց շահերի սպասարկման նպատակով: Ռուստի այս պարագայում ՀՀ և ԼՂ-ի խնդիրն է օգտագործել գոյություն ունեցող բոլոր նախադեպերը, միջազգային իրավական ակտերը և իրավասու բոլոր առյանները՝ Արցախի խնդրի արդարացի լուծման և աշխարհաքաղաքական հակասություններում մանրադրամ չդառնալու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ / REFERENCES

1. V. Putin : Speech at the Munich Conference on the question of safety policies, Munich, 10 February, 2007
2. RESOLUTIONS ADOPTED BY THE FIRST ORDINARY SESSION OF THE ASSEMBLY OF HEADS OF STATE AND GOVERNMENT HELD IN CAIRO, UAR, Cairo, FROM 17 TO 21 JULY 1964
3. INTERNATIONAL COURT OF JUSTICE, Frontier Dispute (Burkina Faso/Republic of Mali), <https://www.icj-cij.org/en/case/69>, San Francisco, 1983
4. Text of resolution 390 A (V) adopted on 2 December 1950 by the General Assembly of the United Nations, Annexes (p. 74-89), New York, 1950
5. Robert Alden Special, China's First U. N. Veto Bars Bangladesh The New York Times Aug. 26, 1972, <https://www.nytimes.com/1972/08/26/archives/chinas-first-un-veto-bars-bangladesh-soviet-union-and-india-are.html>
6. Declaration on the Occasion of the 50th Anniversary of the United Nations : resolution / adopted by the General Assembly. UN. General Assembly (50th sess. : 1995-1996), New York, 9 Nov. 1995.
7. Bruno Coppieters: Kosovo and the Principles of Just Secession, Centre for European policy studies, Brussels, November 2007
8. UN MISSION IN KOSOVO, New York, 10 June 1999, <https://unmik.unmissions.org/united-nations-resolution-1244>
9. CASE CONCERNING MILITARY AND PARAMILITARY ACTIVITIES IN AND AGAINST NICARAGUA, San Francisco, 27 JUNE 1986, <https://www.icj-cij.org/public/files/case-related/70/070-19860627-JUD-01-00-EN.pdf>
10. United Nations Security Council Resolution 1674, New York, April 28, 2006, [https://www.un.org/ruleoflaw/blog/document/security-council-resolution-1674-2006-on-protection-of-civilians-in-armed-conflict/Res1674%20on%20protection%20civilians%20in%20armed%20conflict%20\(28](https://www.un.org/ruleoflaw/blog/document/security-council-resolution-1674-2006-on-protection-of-civilians-in-armed-conflict/Res1674%20on%20protection%20civilians%20in%20armed%20conflict%20(28)

Apr06).pdf

11. Internationalization of Ethnic Conflicts and Impact on Regional and International Security, Journal of Political Sciences & Public Affairs, USA, December 07, 2017
12. А.С. Буханова, Коллизия принципов самоопределения народов, территориальной целостности государств и возможные пути ее решения // Право и управление: XXI век, Москва, 2011. Kollizija principov samoopredelenija narodov, territorial'noj celostnosti gosudarstv i vozmozhnye puti ee reshenija // Pravo i upravlenie: XXI vek (Conflict of principles of self-determination of peoples, territorial integrity of States and possible ways of its solution // Law and management: XXI century), Moskva, 2011 (in Russian)
13. Շավարշ Քոչարյան. Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, Shavarsh Qocharyan. Inchu der'evs kargavorvac' che' Ler'nayin Gharabaghi hakamartut'yuny' (Why has the Nagorno-Karabakh conflict not been resolved yet?) https://www.mfa.am/filemanager/Statics/Article_nkr_arm.pdf, Երևան, 2015 (in Armenian)
14. Բիշքեկյան արձանագրություններ, 1994-ի մայիսի 5, Bishqekyan ard'anagrut'yunner, 1994-i mayisi 5 (Bishkek Protocols, May 5, 1994,) <https://blognews.am/arm/news/265256/1994-i-mayisi-5-y-bishqekyan-ardzanagrutyny.html> in Armenian)
15. Definition of Aggression, United Nations General Assembly Resolution 3314, New York, 14 December 1974, <http://hrlibrary.umn.edu/instree/GAres3314.html>

РЕЗЮМЕ

Видение урегулирования Арцахского конфликта в контексте осуществления права народов на самоопределение

Лилит Даллакян

*магистр юридических наук, соискатель кафедры политических институтов
и процессов ЕГУ*

Ереван, Республика Армения

Ключевые слова: Право на самоопределение, Совет Безопасности ООН, Нагорный Карабах, агрессия, Косово, колонизированные народы, Международный суд ООН, Мадридские принципы.

В статье делается попытка раскрыть особенности применения права на самоопределение в международном праве путем анализа множества фактов, представлены правовые документы и судебные прецеденты, относящиеся к теме, а также отдельные примеры реализации права народов на самоопределение в разных регионах. Тщательно были проанализированы существующие взгляды и противоречия специалистов международного права на право на самоопределение, представлены элементы и факторы необходимые для реализации этого права. В статье ставится задача найти ключи к урегулированию нагорно-карабахского конфликта в рамках существующих правовых актов и международного опыта. Сделан вывод о необходимости передачи решения вопроса о

праве армян Арцаха на самоопределение в соответствующие инстанции, использования всех имеющихся правовых инструментов для справедливого решения проблемы. Были проведены параллели между прецедентом самоопределения Косово, применением принципа «отделения ради спасения» и нагорно-карабахским конфликтом. Автор пришел к выводу, что для нейтрализации экзистенциальной угрозы касающийся армян, необходимо использовать принцип «отделения ради спасения», для реализации которого необходимо внедрение международных механизмов соответствующими органами, такими как Совет Безопасности ООН и Международный суд ООН.

SUMMARY

Vision of Artsakh Conflict Settlement in the Context of Exercise of Nations Right to Self-Determination

Lilit Dallakyan

YSU, Department of Political Institutions and Processes,

Master of Law, Ph.D.Student

Yerevan, Republic of Armenia

Key words: right to self-determination, UN Security Council, Nagorno-Karabakh, aggression, Kosovo, colonized peoples, International Court of Justice, Madrid principles.

The article tries to reveal the features of the application of the right to self-determination in international law by analyzing numerous facts, presents the legal documents and court precedents related to the topic as well as examples of the exercise of the right to self-determination in different regions. Existing views and contradictions on the right of self-determination among international law specialists were accurately analyzed, also the elements and components necessary for the realization of that right were presented. The article aims to find the solution to the Nagorno-Karabakh conflict in the framework of existing legal acts and international experience. An important conclusion was made that it is necessary to transfer the issue of the right of the self-determination of Armenians in Artsakh to appropriate instances, to use all the available legal tools for the fair solution of the conflict. The parallels were made between the precedent of Kosovo's self-determination, the application of the principle of "secession for salvation" and between the Nagorno-Karabakh conflict. The author came to the conclusion that in order to neutralize the existential threat to the Armenians of Artsakh, the application of the principle of "secession for salvation" became imperative, the implementation of which requires the application of international mechanisms by the relevant authorities, including the UN Security Council and the UN International Court of Justice.